ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Ք. Սևան

28.12.2017թ.

Ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Գնահատողներ՝ Խաչիկ Կիրկակոսյան

Բացողներ՝ Ռոմելա Հարությունյան

Մարիաննա Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Մ. Սիմոնյան)

1. Տեղեկություններ՝ հարցումների և պատասխանների մասին.
2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ՝ հարցումների և պատասխանների մասին.

1.1 Նկատի ունենալով, որ <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի և ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված հայտերը գնահատելու համար անհրաժեշտ էր որոշակի հարցերի պարզաբանում, հանձնաժողովի 13.12.2017թ.-ի թիվ 3 որոշմամբ կասեցվել էր ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը և որոշակի

հարցերի պարզաբանում ստանալու նպատակով հարցում էր ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն: 27.12.2017թ.-ին ստացվել էր ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը:

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ. Սիմոնյան)

2.1 <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

2.2 <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը /Հավելված 1/, որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը /Հավելված 3/, գնային առաջարկը /Հավելված 4/ և տուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 8/ ստորագրված են Մելքոնյան Գայանե անվամբ էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունը /Հավելված 2/ և մասնակցի իրական շահառուների մասին տվյալները /Հավելված 2.1/ ստորագրված չեն: Հայտում բացակայում է <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Արթուր Բարսեղյանի կողմից Գայանե Մելքոնյանին փաստաթղթերը ստորագրելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը /լիազորագիր/:

2.3 ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝ տուժանքի մասին համաձայնագրի /Հավելված 8/: ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը ներկայացրել է գնային առաջարկ 3822696 ՀՀ դրամի չափով, որի 5%-ը կազմում է 191134.8 ՀՀ դրամ, սակայն հայտի ապահովման չափը վճարման պահանջագրում նշել է 191134 ՀՀ դրամ: Հրավերի 7.1 կետով սահմանված է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 4-րդ ենթակետով /հայտի ապահովումը հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու պատճառաբանությամբ/ հանձնաժողովը որոշեց ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից սույն ընթացակարգին ներկայացված հայտը մերժել:

2.4 Հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 41-րդ կետով որոշեց մեկ աշխատանքային օրով

կասեցնել նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Սիմոնյան)

5.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 29.12.2017թ.-ին ժամը 17:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան